

ՆՇԱՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հասարակության մեջ մարդկանց հաղորդակցությունը գլխավորապես նշանային բնույթ է կրում: Այս մասին է գրում նաև Յ. Ս. Մասլովն ասելով «Տեղեկության փոխանակման համար մարդու կողմից օգտագործվող միջոցների բոլոր համակարգերը նշանային բնույթ են կրում, կամ էլ նշանագիտական համակարգեր են» (Маслов 1987: 24): Գիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ նշանային գործունեությունը նախ և առաջ ենթադրում է նշանաստեղծում, նշանակերտում (սեմիոզիս), որն ընթանում է մարդու մտածական զարգացումներին զուգընթաց: Այս տեսակետից կարևորվում են այն խնդիրները, որոնք կապված են նշանի էութենական հատկանիշների և դրանց շուրջ ծավալված քննարկումների հետ:

Նշանի գաղափարը գիտականորեն սկսվել է քննարկվել սկսած 20-րդ դարի սկզբից: Այդ ժամանակ արդեն խիստ զգացվում էր պահանջն այն տեսական հիմքի, որը հնարավորություն կտար ընդհանրացնելու տարբեր գիտաճյուղերում ստացված ուսումնասիրությունների արդյունքները: Նշանի հատուկ տեսության ստեղծման անհրաժեշտության մասին առաջինը խոսեցին փիլիսոփաները: Կարելի է պնդել, որ նշանի մասին տեսության ստեղծման մեկնարկը եղավ փիլիսոփայական հայեցակարգերի համակարգում մինչև բուն լեզվականին հասնելը:

Այսպես, առաջին անգամ նշանի մասին խոսել է բնագետ, տրամաբան, փիլիսոփա Չարլզ Սանդերս Պիրսը: Նրա հայացքներն իրենց հետագա զարգացումը ստացան փիլիսոփաներ Չարլզ Մորիսի, Ռուդոլֆ Կառնապի և Ալֆրեդ Տարսկու աշխատություններում: Փիլիսոփայական տեսությունների շրջանակներում քննարկվելուց հետո այն մուտք գործեց լեզվաբանության տիրույթ լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրի շնորհիվ: Հետագայում նշանի մասին տեսությունն այնքան ընդլայնեց իր տիրույթները «խորության» և «ծավալի» իմաստով, որ դարձավ առանձին գիտակարգ նշանագիտություն անվամբ:

Ընդունված է նշանագիտության հիմնադիր համարել Չարլզ Պիրսին: Նա առաջինն էր, ով տվեց նշանի սահմանումը, կատարեց նշանների նախնական դասակարգում և որոշակի ճշգրտում մտցրեց այդ գիտության խնդիրների և սահմանների հարցում: Նշանագիտությունը մաթեմատիկայի

մի բաժին էր նա համարում և ներկայացնում այն որպես «տրամաբանության համընդհանուր հանրահաշիվ» (*Peirce Ch. 1996: 3604*):

Զարկ Պիրսը տարբերակել է նշանների երեք տեսակ՝ իկոն, ինդեքս, սիմվոլ: Նրա այս դասակարգման հիմքում ընկած է ձևի և բովանդակության փոխհարաբերությունների տիպաբանությունը: Եթե ինդեքսը կապված է որոշ տեղի և ժամանակի (ներկա ժամանակի) հետ, իսկ իկոնը հիմնվում է անցյալի փորձի վրա, ապա խորհդանշանը ոչ մի սահմանափակում չունի (ոչ տեղի, ոչ ժամանակի): Խորհրդանշանն ազատ է ամեն ինչից, ոչ մի սահմանափակում չունի: Ըստ նրա ինդեքսները նշաններ են, որ անմիջականորեն մատնանշում են առարկան: Իկոնները նշաններ են, որ ունեն արտահայտության պլան, որն էլ նմանություն ունի իրականությունն արտապատկերող երևույթի հետ: Իսկ խորհրդանշանների ունեցած արտահայտության պլանը չի հարաբերակցվում նշանակյալ առարկայի հետ:

Հետաքրքրական է այն, որ Չ. Պիրսի նշանի տեսությունը ճանաչում գտավ այն բանից հետո, երբ ամերիկացի փիլիսոփա Չ. Մորրիսն իր աշխատության մեջ զարգացրեց նրա գաղափարները: Հատկանշական է Չ. Մորիսի կողմից նշանագիտության մեջ հետազոտական երեք տիրույթների տարրոշումը.

1. հարաբերություն նշանի և արտաքին աշխարհի միջև (իմաստաբանություն)

2. հարաբերություն նշանի և նշանի միջև (շարահյուսություն)

3. հարաբերություն նշանի և նշանը գործածողի միջև (գործաբանություն) (*Morris Ch. 1946*):

Ինչ վերաբերում է նշանի սահմանմանը, ապա այն դիտվում է որպես ինչ-որ նյութակիր բան, որն էլ իր հերթին ներկայացնում է մեկ այլ բան (օրինակ՝ տեղեկություն): Հետագայում Սոսյուրը, (ինչպես և Լուի Ելմսը) այդ նյութակիր էությունը (միավորը) անվանում են նշանակիչ (ինչյունական, լսելի պատկեր, նյութական կոդ, արտահայտության ձև, արտահայտության պլան), իսկ այն ինչ դա նշանակում է նշանակյալ (բովանդակություն, նշանակություն, իմաստ, հասկացություն, բովանդակության պլան): Սոսյուրը նշանը սահմանել է հետևյալ կերպ՝ «Նշանը մի ամբողջություն է, որը հանդիսանում է նշանակիչի (ակուստիկ, հնչյունական պատկեր/ արտահայտության պլան) և նշանակյալի (հասկացություն, բովանդակության պլան) հարաբերության արդյունք» (*Фердинанд де Соссюр 1999: 68-88*):

Նշանակիչ-նշանակյալ հասկացությունների տարբերակումը հնարավորություն ընձեռեց լեզվաբանական մի շարք հայացքներ մեկնաբանել նոր լույսի ներքո: Այսպես օրինակ, համաձայն այս մոտեցման բազմիմաս-

տությունը (երբեմն համանունությունը) առաջ է գալիս այն դեպքում, երբ նույն նշանակիչը ձեռք է բերում մի քանի նշանակյալ, ինչպես զլուխ (որպես մարմնի մաս, գրքի զլուխ և որպես կառավարություն): Գոյություն ունի նաև սրան հակառակ գործընթացը. օրինակ, հոմանիշությունը առաջ է գալիս երբ նշանակյալը, պահպանելով կապը իր նշանակիչի հետ, ձգտում է արտահայտվել այլ նշանակիչներով. օրինակ՝ արև – արեգակ: Առաջին անգամ այս մասին խոսել է ռուս լեզվաբան Ս.Օ. Կարցևսկին, ըստ որի լեզվական նշանը ձգտում է ընդլայնել կամ արտահայտության կամ բովանդակության իր պլանը: Բովանդակության պլանի փոփոխությունը հանգեցնում է համանունության, արտահայտության պլանի՝ ձևական կողմի փոփոխությունը՝ հոմանիշության: Այս երևույթը նա անվանել է լեզվական նշանի ասիմետրիա: Իսկ երկու պլանների փոփոխության դեպքում առաջանում է նոր նշան, նոր երկկողմանի միավոր (*Карцевский С* 1965: 85-93):

Նշանակիչի և նշանակյալի միջև հարաբերությունները յուրովի է ներկայացնում Մոսյուրը: Նա առանձնացնում է հասկացություններ (կամայականություն և պայմանականություն), որոնք հետագայում լայն քննարկման առարկա են դառնում:

Կամայականություն ասելով Մոսյուրն ի նկատի ունի այն, որ չնայած նշանի արտահայտության և բովանդակության պլանների փոխադարձ կապին, հարաբերությունը կամայական է, այսինքն նշանի ձևը պայմանավորված չէ նրա բովանդակությամբ: Բացառություն կարող են կազմել միայն բնաձայնությունները: Վերջինիս դեպքում նշանի ձևի և բովանդակության միջև առկա է որոշակի պատճառաբանվածություն:

Մոսյուրը բերում է *soeur* բառի օրինակը և նշում, որ [*s-o-r*] հնչյունների հաջորդականությունը ոչ մի ձևով կապված չէ «բույր» հասկացության հետ: Սա խոսում է այն մասին, որ «նշանակիչի և նշանակյալի միջև կապը կամայական է», այլ կերպ ասած՝ «նշանը կամայական է»: Մոսյուրը կամայական ասելով հասկանում է, որ «նշանը մոտիվացված չէ» (*Cocciop* 1977: 163-166):

Բենվենիստը փորձում է հակադրվել նշանի այսպիսի ընկալմանը: Համաձայն Բենվենիստի՝ նշանը բոլորովին էլ չունի չպատճառաբանված բնույթ: Մինևույն կենդանին մի երկրում անվանվում է *бѣлѣ*, իսկ մյուս երկրում՝ *ox*, երրորդում՝ *boeuf*: Եվ, ուրեմն, մինևույն առարկային տրված բոլոր անվանումների առկայությունը փաստում է այն մասին, որ դրանցից որևէ մեկը չէր կարող լինել այն միակ անունը, որ կտրվեր տվյալ առարկային կամ երևույթին: Խնդիրն այստեղ ըստ Բենվենիստի, այլ է, այն է, որ պետք է գտնել երևույթի ներքին կառուցվածքը, և նկարագրել այն՝ նշանով:

արտահայտման ձևերի ամբողջությունից: Այսպիսով, ըստ նրա նշանակիչի և նշանակալի միջև կապը կամայական չէ, այլ հակառակը՝ անհրաժեշտ (Benveniste 1971: 43-48): Ըստ Բենվենիստի՝ նշանի կամայականությունն այն է, որ կոնկրետ մի նշան է կցվում (և ոչ թե մեկ այլ)՝ իրականության միավորին: Այս իմաստով կարելի է միայն խոսել նշանի կամայականության մասին: Պայմանականությունը *նա բացատրում է նրանով*, որ նշանն օգտագործողները նույն նշանակիչի դեպքում միևնույն նշանակելին են հասկանում, այլապես հաղորդակցությունն անհնարին կդառնա: Մա նման է հաղորդողի և հաղորդակցվողի միջև պայմանավորված համաձայնության:

Նշանի միասնական կառուցվածքի առումով հատկանշական է Սոսյուրի արած համեմատությունը: Նա նշանը համեմատում է թղթի երկու կողմերի հետ: «Ննարավոր չէ կտրել թղթի մեկ երեսը՝ առանց կտրելու և մյուսը»: Նույնը տեղի է ունենում և լեզվում՝ հնարավոր չէ միտքն ու հնչյունը անջատել իրարից: Դա հնարավոր է միայն վերացարկման դեպքում: Դրա արդյունքում ուսումնասիրողը կհայտնվի կամ հոգեբանության, կամ հնչյունաբանության ոլորտում:

Անգամ այս հակիրճ շարադրանքից նկատելի է, որ Սոսյուրի տեսությունը բուն լեզվական է. նա խոսել է նշանի մասին միայն լեզվի համակարգում, այսինքն՝ խոսել է միայն լեզվական նշանի մասին, և լեզվաբանության առարկան սահմանում է լեզուն, լեզվի համակարգը՝ «ինքն իր մեջ, ինքն իր համար»: Նրա կարծիքով գլխավոր նշանային համակարգը լեզուն է, մնացած նշանային համակարգերը հարաբերվում են լեզվին: Եվ ուրեմն՝ գլխավորը լեզվական նշանն է, մնացած բոլոր նշանները լեզվին ածանցյալ են: Լեզվական նշան նա համարում է բառը. ուսումնասիրությունից դուրս է թողնում նախադասությունը՝ համարելով այն խոսքի միավոր: Բայց նաև տեղին կլինի նշել, որ նշանը ոչ միայն նշանային համակարգի միավոր է, այլև նշանային հաջորդականության, այսինքն՝ տեքստի: Եվ ուրեմն, նշանի կիրառությունն ու իմաստը պայմանավորված են նաև տեքստի այլ նշանների հետ նրա ունեցած կապերով, որ ապահովում են տեքստի իմաստային ամբողջականությունը:

Հատկանշական է նաև Սոսյուրի այն դրույթը, համաձայն որի՝ լեզվում չկա ոչինչ, բացի հակադրություններից: Այսինքն, յուրաքանչյուր լեզվական միավոր գոյություն ունի մյուս միավորների հետ ունեցած հարաբերությունների մեջ, և սա բնորոշել է որպես արժույթ կամ վալենտակաություն: Ըստ նրա՝ նշանը դառնում է այդպիսին, երբ այն արժեք վալենտակաություն է ձեռք բերում համակարգի ներսում, այսինքն՝ երբ այն որոշակի տեղ է զբաղեցնում հակադրությունների համակարգում:

Նշանի յուրակերպ մեկնաբանություն է տալիս Վ. Ա. Շտոֆֆը: Նրա կարծիքով նշանը ազդանշանի մասնավոր դեպք է, որն ի տարբերություն ազդանշանների, որ տեղեկություն են փոխանցում մեխանիզմներում կամ օրգանիզմներում, օգտագործվում է տեղեկությունը մարդկային հասարակության մեջ փոխանցելու համար: Այնուհետև գիտնականն ընդգծում է, որ նշանային միջոցը որպես նյութական գործընթաց, առարկա կամ երևույթ նշան է դառնում միայն այն ժամանակ, երբ այն հաղորդակցական գործընթացում, սոցիալական շփման մեջ ծառայում է մի անհատի մտքի և զգացմունքների փոխանցմանը մյուս անհատին: «Նշանները, ինչպես և լեզուն, հանդիսանում են մարդկանց միջև շփման միջոց, և դրանով էլ մարդկանց մտածողությունն ու հոգևոր կյանքն ընդհանրապես դարձնում հասարակական սեփականություն» (Մտֆֆ 1976:77-89):

Սույն հոդվածի շրջանակներում մենք փորձեցինք հակիրճ ներկայացնել այն հիմնադրույթները, որոնք կարևորագույն դերակատարություն են ունեցել ինչպես նշանագիտության, այնպես էլ արդի լեզվաբանական տեսությունների զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. Вартазарян С.Р., От знака к образу, Ереван, 1973
2. Карцевский С., Об асимметричном дуализме лингвистического знака, в кн.: Звегинцев В.А., История языкознания XIX—XX веков в очерках и извлечениях, ч. 2, М., 1965
3. Маслов Ю. С., Введение в языкознание. Изд. Второе, перераб. и дополн. М.: Высшая школа, 1987. — с. 24-32
4. Фердинанд де Соссюр, Курс общей лингвистики, пер. с франц. С. В. Чистяковой, Под общ. ред. М. Э. Рут. Екатеринбург: издательство Уральского университета, 1999
5. Фердинанд де Соссюр, Труды по языкознанию, пер. с франц. под ред. А.А. Холодовича, Москва 1977
6. Штофф Б. А. К вопросу о гносеологической природе знака и знаковой деятельности // Методологические проблемы анализа языка. — Ереван: Изд-во Ереванского университета, 1976
7. Benveniste Emile, Problems in general linguistics, translated by Mary Elizabeth Meek, Coral Gables, Fla.: University of Miami Press, 1971 from 1. Benveniste, *Problèmes de linguistique générale*, Paris: Editions Gallimard, 1966
8. Morris Ch., Signs, Language and Behavior, New York, 1946
9. Peirce Ch. *The Collected Papers of Charles Sanders Peirce*, Vols. I-VI ed. Charles Hartshorne and Paul Weiss (Cambridge, MA Harvard University Press, 1931-1935), Vols. VII-VIII ed. Arthur W. Burks (same publisher, 1958). Ed. By Larry Hickman, IntelLex Corporation, Charlottesville, Va (1996), available at <http://www.scribd.com/doc/7221904/PIERCES-Collected-Papers>

The article aims at presenting the theses most essential in the development of semiotics and in the formation of the modern linguistic theories.